# ՊԻՈՏՐՈՎՍԿԻՆ ԾԱՆՈԹԱՑԱՎ ՀԱՅ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու նպատակով, որպես ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Հայաստան էր ժամանել Սանկտ Պետերբուրգի պետական պատկերասրահի տնօրեն, ՌԴ ԳԱԱ թղթակից անդամ Մ. Բ. Պիոտրովսկին: Նա այցելել է նաեւ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ: Ըստ ՊՈԱԿ-ի մամուլի քարտուղար Լանա Մշեցյանի, պարոն Պիոտրովսկին մանրամասն ծանոթացավ մշակութաբանական համալիր փորձաքննությունների կատարման եւ անցկացման առանձնահատկություններին: Նրան ներկայացվեցին այն մշակութաբանական համալիր փորձաքննությունների վարույթները, որոնք կատարվել են ձեռագրաբանական, փաստաթղթաբանական եւ նյութագիտական (ներկանյութ, մանրաթել) համապատասխան բաժինների մասնագետների մասնակցությամբ: Այնուհետեւ պարոն Պիոտրովսկին ծանոթացել է բաժնի պատմության, ինչպես նաեւ բաժնի փորձագետների հետ: Վերջում նա այցելել է այն բաժինները եւ լաբորատորիաները, որոնք մասնակցում են մշակութաբանական համալիր փորձաքննություններին: Մշակութաբանական փորձաքննությունների բաժնի պետ Է. Ավանեսովը եւ այդ բաժինների պետերը կարեւորել են մշակութաբանական փորձաքննությունների համալիր լինելը: